«Լսելով կառավարութեան հաղորդագրութիւնը և հաւանութիւն տալով նրա վարած քաղաքականութեանը՝ խորհրդարանը հրահանգում է լարել բոլոր ուժերը՝ ապահովելու համար երկրի պաշտպանութեան գործը։ Միաժամանակ յանձնարարում է խորհրդարանի նախագահութեանը՝ կոչ անել ժողովրդին»։

Բանաձևն ընդունւում է երեք ձայնի ձեռնպահութեամբ։

ՆՈՅԵՄԲԵՐ 23-Ի ԱՐՏԱԿԱՐԳ ՆԻՍՏԸ

Նիստը բացւում է երեկոյեան ժամը 8-ին։ Ներկայ են 35 պատգամաւորներ։

Նախագահում է Յովհ. Քաջազնունին։

Օրակարգը՝ կառավարութեան հրաժարականը և դրա հետ կապւած խնդիրներ։

Նախագահ. — Հայաստանի խորհրդարանի պատգամաւորներ, նախագահութիւնը նախարարապետ Հ. Օհանջանեանից ստացել է ներկայ կառավարութեան հրաժարականը, որ հետևեալն է.

«23 նոյեմբ. 1920թ. Երևան

Հայաստանի խորհրդարանի նախագահութեան

Մեծարգոյ պարոն նախագահ,

Այսու պատիւ ունեմ խնդրելու ձեզ ներկայացնել Հայաստանի Հանրապետութեան պարլամենտին իմ և իմ նախագահութեան տակ եղած Հայաստանի հանրապետութեան կառավարութեան հրաժարականը։

Նախարարապետ՝ Հ. Օհանջանեան»

Նախագահ. — Ցանկանո՞ւմ է արդեօք նախարարապետը բերանացի կերպով, որևէ բան աւելացնել։

Նախարարապետ Հ. Օհանջանեան. — Հայաստանի խորհրդարանի յարգելի պատգամաւորներ, խորհրդարանի վերջին նիստից յետոյ անցել է 10-12 օր։ Այդ ժամանակամիջոցում մեր կեանքում այնպիսի մեծ փոփոխութիւններ են առաջ եկել, որ կառավարութիւնը նորից դիմում է խորհրդարանին։ Յաղթող թշնամին մեզ առաջարկել էր զինադադարի այնպիսի պայմաններ, որոնց անհնար էր ընդունել և կռիւը շարունակւեց։ Յետադայ դրութիւնը, որ ստեղծւեց ռազմաճակատում, ցոյց տւեց, որ արիւնհեղութիւնն անիմաստ է։ Եւ մենք ստիպւած եղանք ընդունել զինադադարի պայմանները և անցնել հաշտութեան բանակցութիւններին։ Ամսիս 18-ին իրագործւեցին զինադադարի պայմանները։ Վաղն երեկոյեան Ալեքսանդրապոլում հաշտութեան բանակցութիւնները սկսւելու են պաշտօնապէս։

Կառավարութիւնն առանց սպասելու խորհրդարանի նիստին, ընտրել և ուղարկել է հաշտութեան պատւիրակութիւն հետևեալ կազմով. նախագահ՝ Ալ. Խատիսեան, անդամներ՝ Աբր. Գիւլխանդանեան և Ստ. Ղորդանեան. որպէս խորհրդականներ մեկնել են խորհրդարանի անդամներ՝ Լ. Զարաֆեան և Վ. Մինախորեան և մի շարք մասնագէտներ։ Պատւիրակութիւնն Ալեքսանդրապոլ մեկնեց երէկ գիշեր, ուր թշնամու պատւիրակները սպասում են նրանց։ Թէ ի՞նչ վախճան կունենայ, դժւար է ասել։